ՎԵԴԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԱՐԱՏՅԱՆ 40 ՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

## ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ

Սույն աշխատանքային նախագիծը մշակվել է Արարատի մարզպետարանի պատվերով՝ մարզպետարանի և «Տեխշին» ՍՊԸ միջև կնքված պայմանագրի և Վեդիի քաղաքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի համաձայն:

Մեր կողմից ուսումնասիրվել է Վեդի քաղաքի Արարատյան 40 շենքի տանիքի փաստացի վիճակը, տեղում կատարվել է տանիքի չափագրության աշխատանքներ:

Համաձայն պատվիրատուի կողմից ներկայացված տեխնիկական առաջադրանքի, աշխատանքային նախագծով մշակվել է հետևյալը.

- Վեդի քաղաքի Արարատյան 40 շենքի տանիքի փայտե կոնստրուկցիաների և տանիքածածկույթի քանդման ու վերանորոգման աշխատանքներ՝ նոր փայտանյութով և նոր տանիքածածկույթով:

Տանիքի ապամոնտաժումը սկսելուց առաջ անհրաժեշտ է տարանջատել անվտանգության գոտիները, բացառել կողմնակի անձանց մուտքը շին. հրապարակի տարածք, ամբողջությամբ հոսանքազրկել շին. հրապարակի տարածքի բոլոր էլեկտրական գծերը, ապամոնտաժման աշխատանքներում ներգրավված բոլոր անձանց անցկացնել անվտանգության կանոնների դասընթաց:

Հարկ է նշել, որ ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում պարզ դարձավ, որ վերը նշված տանիքի փայտե կոնստրուկցիաները քայքայված են, բացակայում են հակահրդեհային և հականեխիչ ծածկույթները: Փայտե կոնստրուկցիաների միջև հեռավորությունները և անհրաժեշտ քանակը (կանգնակներ, թեքաններ ծպեղնատաքեր, կավարամած և այլն) տեղադրված է տանիքածածկույթի իրականացման շին. նորմերին և կանոններին անհամապատասխան: Գոյություն ունեցող տանիքի փայտյա կոնստրուկցիաները կլոր, ուղղանկյուն և անկանոն կտրվածքի են, ոչ փշատերև անտառանյութից:

Երկարատև շահագործման հետևանքով հիմնականում կորցրել են կրողունակությունը և ցանկալի չեն հետագայում որպես կրող կոնստրուկցիաներ օգտագործելու համար: Տանիքածածկույթը ազբոհերծաքարից է, մասամբ քայքայված, մասամբ էլ ջարդված: Ձեղնահարկում բացակայում է անհրաժեշտ հաստության և մակերեսի խարամի շերտը: Նախագծով նախատեսված է փայտե կոնստրուկցիաների ամբողջովին փոխարինում նոր փայտանյութով, հականեխիչ և հակահրդեհային շերտի պատում, նոր տանիքածածկույթի տեղադրում պրոֆիլավոր ցինկապատ թիթեղից` ճ = 0.55մմ, ինչպես նաև ջրհավաք ճոռերի, ջրընդունիչ ձագարների և ջրթող խողովակների տեղադրում:

Նոր տանիքածածկույթն իրականացնելիս կրող կոնստրուկցիաները, կավարամածը և տախտակամածը նախատեսվում է նոր փայտանյութից, իսկ գոյություն ունեցող փայտանյութից կառանձնացվեն պիտանի փայտե կոնստրուկցիաներ, որոնք կենթարկվեն համապատասխան մշակման և կօգտագործվեն որպես որմնափայտ, հորիզոնական կապ և ծայրակցորդ:

Շինարարական աշխատանքերն իրականացնել լիցենզավորված կազմակերպությունների միջոցով:

- Պահանջվող լիցենզիա՝ բնակելի, հասարակական և արտադրական:

Կատարվող աշխատանքներում պահանջվող մեքենա մեխանիզմներ՝ ավտոկռունկ 1 հատ, բեռնատար մեքենա 1 հատ:

Օգտագործվող շինարարական նյութերին ներկայացվող պահանջը՝ երաշխիքային ժամկետ 10 տարի:

# ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԱՐԱՏՅԱՆ 40 ՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

## ԳԻՐՔ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ, ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾԱՎԱԼՆԵՐ





«ՏԵԽՇԻՆ» ՍՊԸ
2015Թ.


# ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԱՐԱՏՅԱՆ 40 ՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

## ԳԻՐՔ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ, ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾԱՎԱԼՆԵՐ


ՏՆՕՐԵՆ՝ Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ն.Գ.Ճ.՝ Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝
ՎԵԴՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ


«ՏԵԽՇԻՆ» ՍՊԸ
2015Թ.